**ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2>>**

Երևան << 04 >> 04 2017թ.

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն** ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Ասրյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2(երկու)** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **2(երկու)** (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) աշխատանքօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **1179000(մեկ միլիոն հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

---

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011194157**
**ՀՎՀՀ 02506264**

____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31**
**«Արարատ բանկ» ԲԲԸ**
**Հ/Հ՝ 1510012745550100**
**ՀՎՀՀ 00873228**

____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
<< 04 >> 04 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2>> գնման պայմանագրի

"

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | | Նկարագիր | Միավոր ծառայության գինը /ՀՀ դրամ/ | Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ ( KIA OPTIMA 333ss03, 2008թ.)** | Հետևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 80000 | **454000 (չորս հարյուր հիսունչորս հազար)** |
| | | Շարժիչի ռետինե փոկի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /շարժիչի աշխ. ծավալը՝ 2.7լ/ ռետինե փոկի և փոկը ձգող ռոլիկի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 30000 | |
| | | Շարժիչի DMRV-ի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /շարժիչի աշխ. ծավալը՝ 2.7լ/ օդի հոսքի ավտոմատ կարգավորիչի (DMRV) փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017** | 90000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | | |
| | | Շարժիչի յուղի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /2.7 լիտր աշխ. ծավալով/ յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell (10/40) ֆիրմայի արդադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 19000 | |
| | | Շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 7000 | |
| | | Առջևի դիսկերի առանցք ակալների փոխարին ում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի դիսկերի առանցքակալների (подшипник цапки՝ աջ և ձախ, զույգ, կոմպլեկտ) փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող առանցքակալների և տեղադրման արժեքը: Առանցքակալները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 36000 | |
| | | Առջևի արգելակ ման կոճղակն երի փոխարին ում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 23000 | |
| | | Առջևի ձախակող մյան | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի ձախակողմյան դռան դրսի բռնակի | 21000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դռան դրսի բռնակի փոխարինում | (կոմպլեկտ) փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | | |
| | | Առջևի աջակողմյան դռան ներսի բռնակի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի աջակողմյան դռան ներսի բռնակի (կոմպլեկտ) փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 20000 | |
| | | Հետևի ընթացքային մասի գնդաձև ձգանների փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /тяга/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 60000 | |
| | | Առջևի ընթացքային մասի անվադողերի բացվածքը կարգավորող ներդիրների (развальные втулки) փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի անվադողերի բացվածքը կարգավորող ներդիրների (развальные втулки) փոխարինում /կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 20000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 6000 | |
| | | Առջևի ընթացքային մասի գնդաձև ծգաններ ի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ծգանների /шаровой/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 42000 | |
| 2 | **Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ ( KIA OPTIMA 800ss03, 2008թ.)** | Անվադողերի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի անվադողերի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվադողերի /4 հատ ձմեռային/, հավասարակշռման, տեղադրման արժեքը: Անվադողերը պետք է լինեն նոր, Cordiant կամ Amtel ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվադողերի չափսը՝ 225/55/17: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 132000 | **480000 (չորս հարյուր ութսուն հազար)** |
| | | Հետևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 68000 | |
| | | Առջևի ընթացքային մասի գնդաձև ծգաններ | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ծգանների /тяга/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող** | 40000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ի փոխարինում | պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | | |
| | | Հետևի ընթացքային մասի բուշերի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի բուշերի /буш рогатки/ փոխարինում/4 հատ բուշ՝ կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 40000 | |
| | | Առջևի արգելակման կոճղակների փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 18000 | |
| | | Շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 7500 | |
| | | Օդորակիչի ֆրեոնի լիցքավորում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի օդորակիչի ֆրեոնի լիցքավորում՝ ըստ պահանջվող քանակի (ներառյալ լիցքավորվող ֆրեոնի արժեքը), զտում, օդորակիչի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 10000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Օդորակիչի ֆիլտրի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի օդորակիչի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 5000 | |
| | | Շարժիչի DMRV-ի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի/շարժիչի աշխ. ծավալը՝ 2.0լ/ օդի հոսքի ավտոմատ կարգավորիչի (DMRV) փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 95000 | |
| | | Շարժիչի յուղի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /2.0 լիտր աշխ. ծավալով/ յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell (10/40) ֆիրմայի արդադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 16500 | |
| | | Առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 5000 | |
| | | Սրահի ռետինե գորգերի փոխարինում | 2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի սրահի ռետինե գորգերի/կոմպլեկտ/ փոխարինում /ներառյալ փոխարինվող գորգերի արժեքը/: Փոխարինվող գորգերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 7000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Շարժիչի ինդուկցիոն կոճի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի ինդուկցիոն կոճի /катушка/ փոխարինում փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 26000 | |
| | | Բենզինի ֆիլտրի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի բենզինի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 10000 | |
| 4 | **Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ 311000, 733ss03, 2002թ.)** | Հետևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 15000 | **245000 (երկու հարյուր քառասունհինգ հազար)** |
| | | Առջևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 15000 | |
| | | Առջևի անվադողերի | **2006թ. արտադրության HYUNDAI Tucson մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում:** | 5000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Շարժիչի ինդուկցիոն կոճի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի շարժիչի ինդուկցիոն կոճի /катушка/ փոխարինում փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 26000 | |
| | | Բենզինի ֆիլտրի փոխարինում | **2008թ. արտադրության KIA OPTIMA մակնիշի ավտոմեքենայի բենզինի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 10000 | |
| 4 | **Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ 311000, 733ss03, 2002թ.)** | Հետևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 15000 | **245000 (երկու հարյուր քառասունհինգ հազար)** |
| | | Առջևի կախոցների (амортизатор) փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 15000 | |
| | | Առջևի անվադողերի | **2006թ. արտադրության HYUNDAI Tucson մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում:** | 5000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բացվածք ի կարգաբե րում | **Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | | |
| | | Ընթացքա յին մասի վերանոր ոգում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի ակոսավոր մատի/резьбовой палец, 2 հատ/, ռազվալի կցորդիչների/развальные втулки, 2 հատ/, շպռոնիների/шпорни, 2 հատ/ փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող պահեստամասը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 31250 | |
| | | Շարժիչի յուղի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի յուղի փոխման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 9000 | |
| | | Շարժիչի օդի ֆիլտրի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 500 | |
| | | Շարժիչի մոմիկի փոխարին ում | **2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի/շարժիչի աշխ. ծավալը՝ 2.0լ/ մոմիկների /4 հատ/ փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող մոմիկները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն օրիգինալ BOSCH (Platinium) ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 3600 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | Փոխանցման տուփի յուղի փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի փոխանցման տուփի յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 6250 | |
| | Շարժիչի էլեկտրական հովացուցիչի փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի էլեկտրական հովացուցիչի փոխարինում (ներառյալ փոխարինվող էլեկտրական հովացուցիչի արժեքը): ): Փոխարինվող էլեկտրական հովացուցիչը պետք է լինի Bosch ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 20000 | |
| | Առջևի արգելակման կոճղակների փոխարինում | **2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 5500 | |
| | Հետևի արգելակման կոճղակների փոխարինում | **2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի հետևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:** | 13000 | |
| | Փոխանցման տուփի նորոգում | **2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի փոխանցման տուփի դիսկի և պլիտայի փոխարինում, տեղադրում գործարկում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է** | 35000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | | |
| | | Հետևի ռեսորներ ի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի հետևի ռեսորների /զույգ, կոմպլեկտ՝ ներառյալ ռետինե գլխիկները/ փոխարինում, տեղադրում գործարկում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 43000 | |
| | | Փոխանց ման տուփի կցորդիչի առանցք ակալի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի փոխանցման տուփի կցորդիչի առանցքակալի /подшипник выжимной/ փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերի արժեքը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 12500 | |
| | | Առջևի ընթացքա յին մասի գնդաձև ձգաններ ի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /тяга/ փոխարինում /կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 16000 | |
| | | Մեխանիկ ական արգելակ ի ճոպանի փոխարին ում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի մեխանիկական արգելակի ճոպանի փոխարինում /կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: | 8800 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | | |
| | | Շարժիչի փոկի փոխարինում | 2002թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի փոկի փոխարինում(ներառյալ փոխարինվող փոկի արժեքը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի: | 5600 | |
| Ծառայությունների մատուցման ժամկետը՝ | | | | | |
| Սկիզբ՝ պայմանագրի կնքման օր: | | | Ավարտ՝ 20.12.2017թ.: | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

(ստորագրություն)

Հավելված 2
<<04>> ___04___ 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2>> գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ ( KIA OPTIMA 333ss03, 2008թ.) | - | - | - | 200000 | 200000 | 200000 | 300000 | 300000 | 300000 | 454000 | 454000 | 454000 | 454000 |
| 2 | Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ ( KIA OPTIMA 800ss03, 2008թ.) | - | - | - | 200000 | 200000 | 200000 | 300000 | 300000 | 300000 | 480000 | 480000 | 480000 | 480000 |
| 4 | Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ 311000, 733ss03, 2002թ.) | - | - | - | 140000 | 140000 | 140000 | 200000 | 200000 | 200000 | 245000 | 245000 | 245000 | 245000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

(ստորագրություն)

Հավելված 3
<<04>> 04 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2>> գնման պայմանագրի

Պատվիրատու

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

Պայմանագրի կողմ
<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

**Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝** պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «________» **2017թ.**
Պայմանագրի համարը՝ **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2**

Պատվիրատուն՝ ի դեմս Արմեն Գևորգյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

________________
ստորագրություն

________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

________________
ստորագրություն

________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<< 04 >> 04 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2>> գնման պայմանագրի

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի(այսուհետ՝ Պատվիրատու) և <Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. մարտի « » -ին կնքված << ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2>> գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<04>> 04 2017թ.

**<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Ասրյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << **տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների** >>* ձեռքբերման <<**ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/3-17/2** >>* ծածկագրով ՇՀ** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ **Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ**
Հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 31**
Սպասարկող բանկի անվանումը **«Արարատ բանկ» ԲԲԸ**
Հ/Հ **1510012745550100**
ՀՎՀՀ **00873228**
տնօրեն՝
(ստորագրություն)
գլխ. հաշվապահ՝
(ստորագրություն)
Կ.Տ

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ______ 2017թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ **Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ**

4. Վճարողի բանկը՝ **«Արարատ բանկ» ԲԲԸ**

5. Վճարողի հաշվի համարը՝ **1510012745550100**

6. Վճարողի ՀՎՀՀ՝ **00873228**

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

10.Շահառուի բանկը՝ **Կենտրոնական գանձապետարան**

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900005000758**

12.Գումարը թվերով և բառերով՝ **117900 ( մեկ հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր)**

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ**

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ թիվ **ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2 պայմանագրի ապահովում**

15.Պայմանագրի ծածկագիրը՝ **ՀՀԱՆ-ԾՀԾՁԲ-15/3-17/2**

16.Փաստաթղթերի անվանումը, [illegible] համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/________________/<br>/________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/________________/<br>/________________/<br>18.բ.<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

---

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*